ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10

21 ՄԱՅԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստին ներկա էին 8 ավագանու անդամներ ՝ Խաչիկ Վարդանյանը, Ռուսլան Օհանյանը, Աիդա Սարգսյանը, Նարեկ Նալբանդյանը, Դավիթ Մուրադյանը, Գոհար Պառավյանը, Սերյոժա Այվազյանը,Արսեն Գրիգորյանը:

Բացակա էին Վրույր Այվազյանը, Արտյոմ Տոնոյանը, Վարսենիկ Քալաշյանը,Թամարա Գրիգորյանը, Համլետ Գևորգյանը Հրայր Թորոսյանը, Ալիկ Սարգսյանը:

Նիստին մասնակցում էին վարչական ղեկավարներ՝ Ա.Մագթաղյանը, Հ. Վարդանյանը Գոռ Աղաջանյանը Կարեն Լալազարյանը, Մարտին Ալավերդյանը,համայնքապետարանի աշխատակիցներ ՝

Արմեն Մարիկյանը, Անժիկ Սարուխանյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Խաչիկ Վարդանյանը</u>:

<u>Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Սերինե Նալբանդյանը</u>:

Օրակարգում՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
/Զեկ. Ռ.Օհանյան/

2. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը Հայաստանի Հանրապետությանը նվիրատվություն կատարելու մասին:
/Զեկ. Ռ.Օհանյան/

3.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության տալու մասին:
/Զեկ.Ռ.Օհանյան/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ռ.Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2024թ. մայիսի
21-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 49-Ա/

Լսեցին՝

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ռ.Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18 րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջի, և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
1.Համայնքային սեփականություն հանդիսացող Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի 06-027-0072-0017 ծածկագրով անշարժ գույքը՝ 0,11977 հա բնակավայրերի հասարկական կառուցապատման հողամասը նվիրատվության կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետությանը:
2.Համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով կնքել նվիրատվության պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 50-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ռ.Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,«Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ և 68-րդ հոդվածներով,«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով,հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ հավանություն համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության տալուն

1) 0,40715 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝արոտավայր, 1 /մեկ/ լոտով ծածկագիր 06-093-0125-0011 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 15000/ տասնհինգ հազար / ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 51-Ա/

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՐԻՆԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ